## ԳՅՈՒՂԱՏԵՂԵՐ ՄԱՆՈՒՋԱՐԻ ԴԱՇՏՈՒՄ

*Գավառագետի հովտից անմիջապես դեպի հարավ, մինչև Մարտունու շրջանի առաջին՝ Երանոս գյուղի սահմանը բռնում է մի ընդարձակ լեռնադաշտ, որի մեջ տեղ-տեղ բարձրանում են բլուրներ և նախնադարյան դամբարաններ։ Լեռնադաշտը միանգամայն զուրկ է խմելու և ոռոգման ջրից, բայց ունի արգավանդ հողեր, որոնք Գավառագետի աջ ափին գտնվող գյուղերի ցանքսադաշտերն ու արոտավայրերն են։ Ներկայումս այս դաշտում շեն գյուղեր չկան. բայց հնում եղել են չորսը, բոլորն էլ տեղավորված լճի ափերին։ Այս չորս գյուղատեղերում կան բազմաթիվ տների, եկեղեցիների և մատուռների ավերակներ, ինչպես և ձիթհանների մնացորդներ ու գերեզմանոցներ։ Գյուղատեղերից երեքի մեջ կան նաև արձանագրություններ։ Դրանք հետևյալներն են.*

Ա. Արծվաքարի (Ղոշլադի) դոլակներ[1]. *գտնվում է համանուն գյուղից հյուսիս-արևելք, մոտ չորս կիլոմետր հեռու՝ լճի պատնեշանման ափի գլխին, մի նստվածքի մեջ։ Այստեղ կանգուն են սրբատաշ քարերով շինված մի փոքրիկ եկեղեցի (1231), որը կոչվում է Սալոյի վանք, մի ավելի մեծ և թաղածածկ եկեղեցու հիմնապատերը, մի քանի ձիթհանքի և բազմաթիվ տների ավերակները։ Գյուղատեղու արևելյան եզրին է գերեզմանատունը։ Արձանագրության մեջ վայրը կոչված է Ագարակ, թերևս սկզբնապես այդպիսին էլ եղել է. բայց մեծ եկեղեցու մնացորդներն ապացուցում են, որ այն մեծ գյուղ է դարձել հետագայում։*

Բ. Կարմիրի (Ղուլալու) դոլակներ. *գտնվում է նախորդից մոտ 3 կիլոմետր հարավ լճափին, մի ձորակի մեջ։ Տների ավերակներից բացի պահպանվել են եկեղեցու և մատուռի մնացորդները։ Եկեղեցին եղել է թաղածածկ, շինված մեծ և կոփածո քարերով, կոչվել է ս. Գևորգ։ Այժմ այս անունով է հայտնի ամբողջ վայրը։ Մատուռը կոչվել է ս. Խաչ։ Երկուսի շրջապատում էլ կան խաչքարեր և տապանաքարեր, դրանցից քիչ հեռու գերեզմանատունն է։ Ս. Գևորգը համեմատաբար հին է և մեր հին արձանագրությունները նրա շրջապատից են։*

Գ. Ղուռու խարաբա. *գտնվում է լեռնադաշտի վերջավորության մոտ. սրա միջով է անցնում այժմ խճուղին. այստեղ են տեղավորված Գեղարքունիք գյուղի անասնաֆերմաները։ Ավերակների մեջ են եկեղեցու հիմնապատերը՝ շուրջը ընդարձակ գերեզմանատնով։ Պահպանվել են նաև մի մեծ շենքի պատերի մնացորդները, որոնք նորոգելով պահեստ են դարձրել։ Սա, հավանաբար, հին կարավանատան մնացորդ է, հետևաբար հնում էլ ճանապարհն այստեղով է անցել։*

*Այս միջավայրից մենք հավաքել ենք 34 արձանագրություն, որոնցից միայն 10-ն է նախկինում հրատարակված եղել։*

### Ա. ԱՐԾՎԱՔԱՐԻ ԴՈԼԱԿՆԵՐ

**437. ԵԿԵՂԵՑՈՒ** *արևելյան պատին, արտաքուստ, 6 տող.*



Ի ԹՎ.ԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ՀԱՅՈՑ
:ՈՁ: (1231), ՅԻՇԽԱՆՈՒԹԵ.
ԻՒԱՆՑԻ| ԵՒ ԱՒԱԳԻ, ԵՍ
ԻՆԱՑՍ ԳՆԵՑԻ ՁԱԳԱՐԱԿՍ
ԵՒ ՇԻՆԵՑԻ ՋԵԿ|ԵՂԵՑԻՍ.
ԵՍ ԵՒ ՍԱԳԴՈՒԽՏ ԱՄՈՒՍԻՆ
ԻՄ, ՅԻՇԱՏԱԿ ՄԵԶ| ԵՒ
ԾՆԱՒՂԱՑ ՄԵՐՈՑ: ՉԱՏԿԻՆ ԵՐԿՈՒ ԱՒՐ| ԺԱՄ :Ա: ԻՆԱՆԱՅԻՆ, :Ա:
|ՍԱԳԴՈՒԽՏՈՅ ԱՌՆԵՆ |ԱՆԽԱՓԱՆ. ԿԱՏԱՐՈՂՆ ԱԻՐՀՆԱԾ Է:

Ծանոթ. *Առաջին հրատարակիչ Սմբատյանցը եկեղեցին շինող ամուսինների անունները վերծանել է* Մինա և Մազսուա, *իսկ վերջին երկու տողը բաց թողել։ Նույնությամբ արտագրել է Լալայանը։ Անունները սխալ ձևով էլ մտել են Աճառյանի Անձնանունների բառարանը։*

*Հրատ. Սմբատյանց, 498։ Լալայան, XVIII, 133։*

[1] *Դոլակ-ոչխարների ձմեռոց։*

**438. ԵԿԵՂԵՑՈՒ** արևմտյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ, մի երեսպատման քարի վրա չորս խորաններ՝ խաչերով. սրանց գլխին ուռուցիկ տառերով 2 տող.



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐ[Է]ԽԱԻՍ ՀՈ|ԳՈ[Ց]Ն ՍԱՐԻԳԻՍԻՆ:

Ծանոթ. ՍԱՐԳԻՍ բառի վերջում գրիչը երևի սխալվել է, ապա ջնջել և փոխի մեջ ավելացրել ՍԻ տառերը՝ փորագիր։

Լուսանկ. 106

**439. ԵԿԵՂԵՑՈՒ** արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ, երեսպատման մի քարի վրա երկու խորան՝ մեջը խաչեր և գլխին 1 տող.

ՈՍԿԱՆՍԷՐԷՃԱՅԻՂԷ

ՈՍԿԱՆՍ ԷՐԵՑՍ ՅԻՇԷ[ՑԷՔ]:

**440. ԽԱՉՔԱՐ.** կանգնած է եկեղեցու հարավում, պատվանդանի, վրա 1 տող.

ԵՍՅՈՒՍԷՊՍ

ԵՍ ՅՈՒՍԷՊՍ . . .

Ծանոթ. Արձանագրությունը չի շարունակված։
Այստեղ մի շարքի երեք պատվանդանի վրա կանգնած են չորս խաչքարեր։

**441. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** տափակ, մեծ, եկեղեցու մուտքի առաջ, երեսին 3 տող.

ՏԱՊԱՆՍՊԱՅԻՍ
Ե:Բ·ԱՂԲԱՐՔ·Ա:ԱՐ
ՄԵՌԱՅՔՅԻՇԵԻՔՍ

ՏԱՊԱՆՍ ՊԱՅԻՍ|Ե. :Բ: ԱՂԲԱՐՔ :Ա:
ԱԻՐ ՄԵՌԱՅՔ. ՅԻՇԵ[Ք] Ի ՔՍ.

Ծանոթ. Եկեղեցու մուտքը սալարկված է երկու շարք նման տապանաքարերով. միայն այս մեկն ունի տապանագիր. համարում ենք XVI—XVII դարեր։

**442. ԽԱՉՔԱՐ,** մեծ և դեղաքանդակ, բաժանված երկու մասի. քիվին և խորանի շուրջն ու թևերի արանքներում.

կանկնեցլու խաչ.........հոգոյ
գուչարինիղէցէքիք.........



ԿԱ[Ն]ԿՆԵՑԱԻ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹ[Ե]Ի ՀՈԳՈՅ|
ԳՈՒՀԱՐԻՆ. ԻՇԵՑԷՔ Ի ՔՍ . . . |
[Ե]Ս ԳՐԻ[Գ]ՈՐՍ ԿԱ[Ն]ԿՆԵՑՈՒՑԻ ԽԱՉՍ ԸՆԾԱՅ
ԾՆՈ[Ղ]ԱՑ ԻՄՈՑ[,] . . . |
ՄԿՐԸՏ[Չ]

Ծանոթ. Վերջին անունը հավանաբար կազմողինն է։

*443. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, ոյուսիսային երեսին կենցաղային տեսարան, վերին շրջանակին 1 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՄԱԼԻՔԻՆՅԻՇԱՏԱԿՓՈԽԵՑԱՒԻՔՍՌՋՋԵ+

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԱԼ,Ի,ՔԻՆ. ՅԻՇԱՏԱԿ. ՓՈԽԵՑԱՒ Ի ՔՍ. Թ. :ՋՁԵ: (1536):

*444. ԽԱՉՔԱՐ, մեծ, գեղաքանդակ, կրկնախորան, քիվին և շրջանակներին 4 տող.*




ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ,ԻՍ, Վ,ԱՐԴՈՒՄԻՆ ԵՒ ՀՈՂ, · · · ՅԻՆ, ՄԱՐԻԱՄԻՆ. ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ,[ԹՎ.]. :ՌԾԴ: (1605):

*445. ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, կոտրված է երկու մասի և ջարդոտված. քիվին և խորանի շուրջը.*

····ԱՉՄԱՐԷԽԱՍԱՐԳԻ···



[ՍԲ. Խ]ԱՉՍ ԲԱՐԷԽԱ,ԻՍ, ՍԱՐՔՍԻՆ · · · ԹՎ,. :ՌԾԱ: (1602):

Ծանոթ. *Քանդակների և գրչության ոճը Քիրամ կազմողինն է։*

*446. ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ. կոտրված երկու մասի, քիվին 1 տողի մնացորդ.*

····ՉՃԷԽԱԱՂԱՄԻՆ-Գ··

[ՍԲ. Խ]ԱՉՍ ԲԱՐԷԽԱ,ԻՍ, ԱԴ,ԱՄԻՆ ԵՒ Ծ[Ն]ՈՂ,ԱՑ · · ·

Ծանոթ. *Քանդակների և գրչության ոճը Քիրամ կազմողինն է։*

*447. ԽԱՉՔԱՐ, փոքր, քիվին 1 տող.*

ԱԾՈՂՈՐՄԻԵՂՈՒՄԻՆ ԱԾ. ՈՂՈՐՄԻ ԵՂՈՒՄԻՆ:

*448. ԽԱՉՔԱՐ, փոքր, միայն վերին բեկորն է մնացել, քիվին 1 տողի մնացորդ.*

. . . . ՉՄԱՐԷԽԱՒՍ··ԹՌԱՆԱ ՐՄ̄Է ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՐԱՂԹԱՆԱ

*449. ՏԱՊԱՆԱՔԱՐ—ԽՈՅ, զարդաքանդակներով, գլուխը կոտրված-կորած. դմակի և մարմնի վրա 2 տող.*

ԱՅՍ ԷՀԱ ՆԳԻՍՄ<br>ԴԱՆԻԷ ԼԻՍ

ԱՅՍ. Է ՀԱՆԳԻՍՏ | ԴԱՆԻԷԼԻՍ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՅԺՄ ՉԿԱՆ

*450. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.*

Ես Քիւմիւս կանգնեցի սբ. խաչս Ծաւեխսաւս<br>Գեօրգաին. թվ. ։ՌՃԾ։ (1701)։

*451. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.*

Այս է հանգիստ Սահակին. թվ. ։ՌՃԾԴ։ (1705)։ Ես Աւանէս կազմեցի. ես Սառախան կանգնեցի. Զախռախանս կազմել տվի։

*452. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.*

։ՋՁԱ։ (1532)։

*Հրատ. Սմբատյանց, 193։ Լալայան,* XVIII, *133։*

ԿԱՐՄԻՐԻ ԴՈԼԱԿՆԵՐ

*453. ԽԱՉՔԱՐ, մեծ ժայռաբեկորից, ընկած է գյուղատեղիի գերեզմանատան մեջ. ստորին մասում 4 տող.*

ՅԻՂԱՅ ՔՍ<br>ԱԾ ԶՎԱ<br>ԼԻՆ ՀՈԳ<br>ԻՆ ԶԳՍՐԳԱ

ՑԻՇԼԱՅ ՔՍ. | ԱԾ. ԶՎԱՍ | ԼԻՆ ՀՈԳ | ԻՆ, ԶԳՍՐԳԱ։

Ծանոթ. *Առանց զարդերի է, վրան երկու հավասարաթև ուռուցիկ խաչեր միայն, համարում ենք* XIII *դարի։*

*454. ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, կանգնած է երեք շարքից կազմված անմշակ քարերի պատվանդանի վրա՝ ավերակ մատուռի մոտ. միայն ստորին մասում անարվեստ, գուցե հետագայում դրված. 2 տող.*

ԽԱՂԱ<br>ԹԻՂՆ

ԽԱՂԱ | ԹԻՇՆ։

Ծանոթ. *Համարում ենք* XIII *դարի։*

*455. ԽԱՉՔԱՐ, փոքր, ընկած է նախորդի մոտ, ստորին մասում 2 տող.*

ԿՍՆԿԽՍՆ··ՍԳՈՆԴ<br>ՆՀՈԳՈՅ ՈՒՓՐԿՈԹ

ԿԱՆԿՆԵՑԱՒ ԽԱՉՍ ԳՈՒՆԴ | Ն ՀՈԳՈՅ ՈՒ ՓՐԿՈՒԹԵ.

Ծանոթ. *Հավանաբար* XV *դարի։*

456. *ԽԱՉՔԱՐ, Նախորդի մոտ, պատվանդանի վրա. ստորին մասում 3 տող.*



ԿԱՆԳՆԵՑԱՒ [Յ]ԱՆՈՒՆ ԱՅԼԱԶԳԵԱԳԵԱ [Հ]ՈԳՈՅ ՓՐԿՈՒԹԻ.

Ծանոթ. *Հավանաբար XV դար։*

Լուսանկ. 107

457. *ԽԱՉՔԱՐ, մեծ ժայռաբեկորից, կանգնած է ս. Խաչ ավերակ մատուռի գավթի պատի տակ. ստորին մասում 6 տող.*




ԵՍ ՊԱՂԱՆՈՍ ԼՐԵՑՍ [Ս]Ի ԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՀԱՒ[Ա]Ր ԻՄՈՒ ԳՈՐԳ ԻՐԻՑՈՒ. [Յ]ԻՇԵ[Ց]ԷՔ Ի ՔԱ.

Ծանոթ. *Հավանաբար XV դար։*

458. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվում է ս. Խաչ մատուռի ետևը, նոր գերեզմանատան մեջ. երեսին 2 տող.*




Ա[Յ]Ս Է [Հ]ԱՆԳԻՍՏ ՀՌՈՄԻՆ.
ԹՎ. :ՌՃԼԷ: ԷՐ (1688):

## ԴՈՒՌՈՒ ԽԱՐԱԲԱ

459. *ԽԱՉՔԱՐ, կոտրված երեք մասի, ստորին մասը պատվանդանով, կանգնած է ավերակ եկեղեցու արևմտյան պատի տակ. մյուս երկու մասերն ընկած են շուրջը. ստորին մասի վրա երեք խորաններ են, որոնց վերին անկյուններում միայն թվականը.*

ԹՎ. :ՋՀԲ: (1523):

Ծանոթ. *Թվականի մեջ թեթև կերպով երևում է նաև Ճ, կարծում ենք գրիչը սխալվել է ու ջնջել (տե՛ս գծագիրը)։*

460. *ԽԱՉՔԱՐ, ընկած է պատվանդանի դիմաց, որը Նախորդին կից է հարավից. հարավային կողին 6 կարճ տողեր՝ գծերի մեջ առնված.*




ԹՎ. :ՋՀԹ: (1530). ՈՒՂՈՒՐԻՆ [Է] ԽԱՉ[Ս]:



8–619

*461. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, մեծ, հյուսիսային կողին երկու հեծյալներ քարայծ են որսում. հարավային կողին՝ Թամքած ձի, գինու գավեր, կերակրով լիքը պնակ, նետերով լիքը կապարճ, և սաղ նվագող. երկու կողմերի քանդակներից վեր և կողի շրջանակներին արձանագրություն. սկիզբը հյուսիսային կողից. չափածո.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՂԱՋԱՐԻՆ,
ՈՐԴԻ ԱՄԻՐ ԱՂԻՆ,
ԿՐ[Տ]ՍԵՐ ԵՂ|ԲԱՐ ՍԱՐԴԻՍ ԱՂԻՆ։|
ԱՄԱՑ ԷՐ ՍԱՑ ։Լ։ [ԵՐԵՍՈՒ]ՆԻՆ
ՀԱ[Ն]ԴԱՒ [Ի] ՔՍ. ԿՈՒՍԻ ՏԱՐԻՆ,
։Ջ։ (900) ՀԱՑՈՑ ԹՎԻՆ,
։ՂԵ։ (95) ԱՎԵԼ|ՈՐԴԻՆ։ (1546)։
ՀԱՄԱՋ[ԻՋ]ԻՆ.

*Հրատ. Սմբատյանց, 506։ Լալայան, XVIII, 133—34։*
Լուսանկ. 108 (մի մասը)

*462. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հարավային երեսին Թամքած ձի, որի սանձից բռնել է մեկը, նվագողներ, կենտրոնում ննջեցյալ՝ կողքին երկու լացող կանայք։*
*Երկու ուռուցիկ հարթությունների վրա 3 տող.*



ՅԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱՐԳԻՍ ԱՂԻՆ, ՈՐ Է Ո|ՐԴԻ
ԱՄԻՐ ԱՂԻՆ։ Ի ԹՎ ԻՆ ։Ռ։ (1551)։

*Հրատ. Սմբատյանց, 505։*

*463. ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, կանգնած է ավերակ եկեղեցու հյուսիսային կողմում. ճակատին 3 տող.*




Թ.|։ՌԽԴ։|(1595)։ ՍԲ. ԽԱՉՍ
ԲԱՐ[Է]ԽԱՒՍ ՀԱՄԱՁԻՁ ԱՂԻՆ։

*Հրատ. Սմբատյանց, 506։ Լալայան, XVIII, 134. Անունը աղավաղել է՝ «Համամչի Ջագին»։*

*464. ԽԱՉՔԱՐ, ղեղաքանդակ, կանգնած է նախորդ տապանաքարի մոտ քիվին և շրջանակին 2 տող.*

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽԱՍ ԱՄԻՐԱՂԻՆ



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԱՄԻՐ ԱՂԻՆ'.
ԹՎ. :ՌԽԴ: (1595):

*Հրատ. Սմբատյանց, 506։ Լալայան. XVIII, 134։*

*465. ԽԱՉՔԱՐԻ ստորին մասի բեկորի վրա 1 տող.*

ԽԱՉՍԲՐԽՍՄԻՐՋԻՆ

ԽԱՉՍ Բ[Ա]Ր[Է]Խ[ԱՒ]Ս ՄԻՐՋԻՆ։

Լուսանկ. 109

*466. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ բեկորի վրա 1 տող.*

····ԱՋԱՐՀԱՊԻՆ

· · · Ա. ՋԱՒՐՀԱՊԻՆ.

*467. ԽԱՉՔԱՐ, կիսովին ծածկված բեկորներով, գտնվում է ավերակ եկեղեցու արևմուտքում. երևում է 3 տող.*

ԵՍԱԽԱՆՍԿԱՆԳՆԵՑԱ
ՉԽԱՆՍԻՓՐԿՈՒ····
ՐՆԽՄՈՅԹԱԹԷՈՍԻՆ

ԵՍ ԱԽԱՆՍ ԿԱՆԳՆԵՑԱ| ԶԽԱՉՍ Ի
ՓՐԿՈՒ[Թ]Ի. ՀԱՒ|ՐՆ ԻՄՈՅ ԹԱԹԷՈՍԻՆ|
ԵՎ ՄԱՒՐՆ ՆԱՐԻՆԳԻԽԻՆ. ԹՎ. :Ռ:(1551):

Ծանոթ. *Ծածկված մասերը լրացնում ենք ըստ Սմբատյանցի։*

*Հրատ. Սմբատյանց, 506։ Լալայան XVIII, 134։*

*468. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ երեսին 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ
ՈՍԿԱՆԻՆԹՎՌԾԷ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ՈՍԿԱՆԻՆ.
ԹՎ. :ՌԾԷ: (1708):

ԱՅՍՏԵՂ ԵՂԵԼ ԵՆ ՆԱԵՎ ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԸ

*469. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա.*

Հանգիստ Իգնատիոսին, որ փոխեցաւ ի Քս. թվ. :ՋՁԴ: (1535):

*Հրատ. Սմբատյանց, 505։ Լալայան, VXIII, 133։*

*470. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ, որը կանգնած է եղել ավերակ եկեղեցու մեջ.*

:ՉՁԶ: (1337):

Ծանոթ. *Ներկայումս եկեղեցու ներսում, բեմի դիմաց կանգնած են երկու գեղաքանդակ խաչքար՝ սպիտակավուն քարից, բայց ոչ մեկի վրա արձանագրություն չկա։*

*Հրատ. Սմբատյանց, 506։ Լալայան, XVIII, 134։*